Հավելված
Ախուրյան համայնքի « Այգաբաց մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2024թվականի հունվարի 12-ի N 3 հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի, ֆիզկուլտուրայի հրահանգչի և հոգեբանի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի «Այգաբաց մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br>1.մեթոդիստ-0.25 դրույք /30.000 ՀՀ դրամ աշխատավարձ/,<br>2.Ֆիզկուլտուրայի հրահանգիչ-0.25 դրույք /30.000 ՀՀ դրամ աշխատավարձ/,<br>2.հոգեբան-0.5 դրույք / 60.000ՀՀ դրամ աշխատավարձ/, | 1)Որակավորման պահանջները<br>**նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի** (ուս. գծով տնօրենի տեղակալ )պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին յոթը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ։<br>2<br>**նախադպրոցական ուսումնական հաստատության**<br>Ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնը զբաղեցնողը պետք է ունենա միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ վերջին տասը տարվա ընթացքում | **Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը,** որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2)դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3)տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4)դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ | 1)դիմում Ձև1)<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ<br>4)աշխատանքային ստաժի մասին տեղեկանք<br>5)ինքնակենսագրություն ձև4<br>6)մեկ լուսանկար՝ 3×4չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ.<br>8)Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9)հրատարակված հոդվածների ցանկ կամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | մանկավարժական գործունեության առնվազն երկու տարվա մանկավարժական գործունեության ստաժ:<br><br>3.<br>**Նախադպրոցական ուսումնական հաստատության, հոգեբանի պաշտոնն զբաղեցնողը պետք է ունենա՝**<br>1) բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն (սոցիալական մանկավարժություն, սոցիալական աշխատանք մասնագիտությունների և կամ հոգեբանի որակավորմամբ):<br>**1)Որակավորման պահանջները**<br>**2) Ընդհանրական պահանջները**<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի ֆիզ.հրահանգչի և հոգեբանի պաշտոնն զբաղեցնողը պետք է իմանա պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները.<br>ա. դաստիարակչական հարցերը, ըստ ոլորտի՝ կրթության պետական չափորոշիչները, նորմատիվ փաստաթղթերը և մեթոդական հանձնարարականները, մանկավարժության, հոգեբանության, տարիքային ֆիզիոլոգիայի և հիգիենայի, մինչ բժշկական օգնության հիմունքները, աշխատանքի անվտանգության, երեխաների կյանքի և առողջության պահպանման կանոնները: | դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում): |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի, ֆիզկուլտուրայի հրահանգչի և հոգեբանի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ 3-րդ սյունակի 1-ին կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պահանջները: | | Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: |
| 2 | Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը | | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |
| | Վայրը՝ ՀՀՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի փողոց 9, 36շենք, Այգաբաց մանկապարտեզ: Օրը՝2024թվականի փետրվարի 14-ին ժամը՝11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու,լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀՇՄ Ախուրյան համայնքի Այգաբաց բնակավայրի 9 փողոց, 36 շենք Հեռ՝ 094078363 Հարցաշարերը տեղադրված են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «25» մարտի 2022թվականիN471-Ա/2 հրաման: | | 2024թվականի հունվարի 12-ից փետրվարի 8-ը ներառյալ |
| | | Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր,ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի | | |